ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «մայիսի 8-ի» բառերն առաջարկում ենք փոխարինել «ապրիլի 14-ի» բառերով՝ նկատի ունենալով, որ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին:	Ընդունվել է	Կողմ
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք նաև հանել «եռամսյակների» բառը, քանի որ ըստ եռամսյակների ուսման	Ընդունվել է	Կողմ

		գանձումների դեպքում բուհերի համար կստեղծվեն հնարավոր ֆինանսական բարդություններ: Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բուհերում ակադեմիական տարին բաղկացած է 2 հիմնական ուսումնական կիսամյակներից՝ ուսումնական տարվա ընթացքում համապատասխան ուսումնական, քննաշրջանի և պարտադիր արձակուրդների շաբաթներով: Հետևաբար, բուհերի կողմից ուսման վարձավճարների գանձումները, ինչպես նաև ուսանողների տեղափոխության և վերականգնումների		

		գործընթացները (վերջինիս հետ կապված համապատասխան վճարումները՝ նաև կրեդիտներով պայմանավորված) իրականացվում են ըստ կիսամյակների:		
ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ հոդվածն առաջարկում ենք միացնել 1-ին հոդվածին՝ նկատի ունենալով, որ երկու հոդվածներն էլ վերաբերում են օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ կետին:	Ընդունվել է	Կողմ
ՀՀ Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Միաժամանակ, «6-րդ կետից հանել 6-րդ պարբերությունը» բառերն առաջարկում ենք փոխարինել «6-րդ կետի 6-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել» բառերով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների:	Ընդունվել է	Կողմ

ՀՀ Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածն առաջարկում ենք խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ի մասի պահանջներին:	Ընդունվել է	Կողմ